



ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(10)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ
№ 2(10)

ԵՐԵՎԱՆ 2022

*Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի
գիտական խորհրդի որոշմամբ*

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան, պ. գ. թ. – նախագահ

Հայկ Նազարյան, պ. գ. թ. – պատրաստման քարտուղար

Պավել Ավետիսյան, պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Հարություն Մարության, պ. գ. դ.

Համլետ Պետրոսյան, պ. գ. դ., պրոֆեսոր

Հռիփսիմե Պիկիջյան, պ. գ. թ., դոցենտ

Ռուբեն Վարդանյան, պ. գ. թ.

Մխիթար Գաբրիելյան, պ. գ. թ., դոցենտ

Արսեն Բոբոխյան, պ. գ. թ.

Տորք Դալայյան, ք. գ. թ.

Համո Սուքիասյան, պ. գ. թ., դոցենտ

Արա Սանճեան, PhD (ԱՄՆ)

Ռոբերտո Դան, PhD (Իտալիա)

Հրաչ Չիլինկիրեան, PhD (Մեծ Բրիտանիա)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արման Նայրանդյան

ՇԻՎԱՀՈՂԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 8

Կարեն Թոխարյան

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՑԱԽ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ
ԺԱՅՈՒՊԱՏԿԵՐՆԵՐԸ 18

Նժդեհ Երանյան, Համլիար Պեղրոսյան

ՏՈՂԻ ՍՐ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 31

Варданесова Татьяна

КОЛЛЕКЦИЯ СРЕДНЕВЕКОВОГО СТЕКЛА
ИЗ РАСКОПОК Г. ТИГРАНАКЕРТ В АРЦАХЕ 41

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՔՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գոռ Ղազարյան

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ 1920 – 1921 ԹԹ. 46

Մայա Գրիգորյան

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԸՆԹԱՅՔԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ
20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 58

Միրանուշ Առաքելյան

ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ
«СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН
КАВКАЗА» (СМОМПК 1881-1915) ՌՈՒՍԱԼԵԶՈՒ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԷԶԵՐՈՒՄ 68

Վանիկ Վիրաբյան

ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ 1920 Թ.
ԱՊՐԻԼԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ
ԳՈՐԾՈՂ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 77

Մհեր Քումանյս

ՂՈՒԿԱՍ ՍԵՔԱՍՏԱՅՈՒ «ԴԱՎԻԹ ԲԵԿ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՂԱՓԱՆՅՈՑ»-Ի ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 93

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վեռա Բոյան

ՍՅՈՒՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ (ԸՍՏ ԴՐԱՄԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԻ)

108

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լիլիա Ավանեսյան

ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱՋԻ ՆՄՈՒՇՆԵՐ (19-ԲԴ-20-ԲԴ ԴԱՐԻ ՄԿԻՋԲ)

118

Կարինե Բաղդյան

ԱՐՑԱԽԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՁ

129

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անուշ Մաֆայրյան

ԱՐՑԱԽԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

138

Նարինե Նամանյան

ՌԱԶՄԱՊԱՐԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ (ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ)

145

Արմինե Շահբազյան

ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՍՅՈՒՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԿԻՆՈԱՐՎԵՍՏՈՒՄ

155

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Սևդա Գալստյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

168

Համլեդր Պեղրոսյան

ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈՂԻՄԱԿԱՆԸ

183

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ

189

Միրանույշ Առաքելյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
nrane3@yahoo.com

ԱՐՅԱՆԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱՆԴԱՉՐՈՒՅՑՆԵՐԸ «СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН КАВКАЗА» (СМОМПК 1881–1915) ՌՈՒՍԱԼԵՉՈՒ ՄԱՏԵՆԱՃԱՐԻ ԷՋԵՐՈՒՄ*

Հիմնաբառեր. Հայ բանահյուսություն, Արցախ, Սյունիք, վարքաբանական ավանդություն, կրոնական ավանդություն, իմաստաբանական զրույց, բացատրական ավանդագրույց:

Նախաբան

19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակը Ցարական Ռուսաստանն իր տիրապետության տակ գտնվող Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի և Կովկասում բնակվող ժողովուրդների «հոգևոր մերձեցման» և միմյանց նկատմամբ բարեկամական վերաբերմունք ձևավորելու համար իր մշակութային քաղաքականության համատեքստում ձեռնարկեց տպագրություն ռուսալեզու մշակութային մատենաշարի՝ «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (СМОМПК 1881–1915 թթ.), որը հրատարակվեց Թիֆլիսում: Մատենաշարը հիմնականում ընդգրկում է տարբեր ժողովուրդների՝ հայերի, վրացիների, թաթերի և այլոց բանահյուսական տարբեր ժանրերին պատկանող նյութեր, հնագիտական, ազգագրական ակնարկներ: Մատենաշարի թվով 46 հատորներից 10-ում տպագրվել են հայկական բանահյուսական նյութեր և հնագիտական, ազգագրական ակնարկներ: Բանահյուսական նյութերի մեծ մասը գրի է առնվել Արցախ-Սյունիք տարածաշրջանից, ուր գործողումներ են իրականացրել նաև օտար ազգերի բանահավաքները: Բանահյուսական նյութերում մեծ թիվ են կազմում հայ ժողովրդական հեքիաթներն ու ավանդագրույցները, որոնք երբևէ չեն ուսումնասիրվել և չեն վերահրատարակվել:

Ուսումնասիրության նպատակն է մոռացությունից փրկել և գիտական շրջանառության մեջ դնել СМОМПК-ում ռուսերեն թարգմանված և հրատարակված Արցախի և Սյունիքի ոչ նյութական մշակութային ժառանգության մաս կազմող ավանդագրույցներն ու զրույցները, որոնց մի մասն իրենց բովանդակությամբ և տեսակներով զուգահեռներ ունեն մեզ արդեն հայտնի ժողովածուներում, մի մասն էլ հայ բանահյուսության եզակի նմուշներ են:

* Մտացվել է 12. 08. 2022թ., ուղարկվել է գրախոսման 03. 09. 2022թ., ընդունվել է տպագրության 18.11. 2022թ.:

ՇՄՈՄՈՒԿ–ում, ընդհանուր առմամբ, հրատարակված են Կարսի, Երևանի և Ելիզավետպոլի նահանգներից գրառված բանահուսական նյութերը և պատմա-ազգագրական ակնարկները, որոնք վերաբերում են միայն այս երեք վարչական միավորներին: Բացառություն է կազմում միայն ՇՄՈՄՈՒԿ-ի 44-րդ հատորում հրատարակված Վասպուրականին վերաբերող ակնարկը, որի հեղինակը Երվանդ Լալայանն է: Արցախի և Սյունիքի ավանդագրույցները հավաքվել են հիմնականում Ելիզավետպոլի նահանգի Ելիզավետպոլ գավառի Կարաչինար (Արցախի Շահումյանի շրջան), Ջիվանշիրի գավառի Ենգիջե, Ուլուկարաբեկ, Կասապատ (Կուսապատ), Շուշիի շրջանի Տուգ (Տող, Հաղբուրթի շրջան) գյուղերից, Ջանգեղուրի Կապանի շրջանի Արծեվանիկ (Արծվանիկ) գյուղից և Բաքվից: Հատորներում տպագրված է թվով շուրջ 52 ավանդագրույց և գրույց, որոնցից 19-ը գրառված են Սյունիքից և Արցախից: Բանահավաքները դպրոցներում դասավանդող ուսուցիչներ են և Անդրկովկասի ուսուցչական սեմինարիայի սաներ. Ս.Տաբաղյանց, Ա.Միրզոև, Ա.Բաբայան, Պ.Տոնիև, Մ.Պողոսով, Բ.Եղիազարով, Գ.Իզրայելով, Ե.Մելիք-Շահնազարով: Ցավոք բանահավաքները գրառման վայրի, ասացողների տարիքի, ծննդավայրի, զբաղմունքի մասին որևէ տեղեկություն չեն տալիս, հայտնի են միայն երկու ասացողների անուն ազգանունը և մեկի տարիքը. Անուշ Բաբայան և 68-ամյա Հարություն Տեր-Գրիգորև: Ուշագրավ է նաև բանահավաքների ազգանունների փոփոխությունը. հայկական յան կամ յանց վերջածանցը փոխարինված է սլավոնական ով կամ եվ վերջածանցով՝ Իզրայիով, Միրզոև և այլն, որը ռուսական կայսրության կողմից վարված ուժացման քաղաքականության ցուցիչներից է:

Ավանդագրույցների դասակարգումը: Պետք է նկատել, որ բանահյուսության մեջ մինչև 20-րդ դարի կեսերը ավանդագրույցի, գրույցի, առասպելի հստակ դասակարգում չկար, ինչը տեսանելի է նաև ՇՄՈՄՈՒԿ–ում, ուր իրապատում հեքիաթները հաճախ անվանվում են ավանդագրույց կամ լեգենդ, իսկ որոշ ավանդագրույցներ՝ հավատալիք: Հայ բանագիտության մեջ ավանդությունների դասակարգումը կատարել է Արամ Ղանալանյանը (մանրամասն տե՛ս Ղանալանյան 1969)՝ մանրամասն վերլուծելով ավանդագրույցի և առասպելի տարբերություններն ու առանձնացրել ավանդագրույցի տեսակները: Ղանալանյանը մասնավորապես նշում է, որ շատ հետազոտողներ առասպելներն ու ավանդությունները (ավանդություն եզրույթն ավելի ուշ հայ բանագիտության մեջ սկսեց գործածվել նաև ավանդագրույց եզրույթով) հաճախ են շփոթում միմյանց հետ՝ հաշվի չառնելով երկու կարևոր հանգամանք. առասպելների մեջ շեշտված է բնության և հասարակական կյանքի դիցաբանական ընկալումը, իսկ ավանդություններն ունեն առավել գիտակցական ու իրականությանը մոտ բնույթ, ուր առաջնայինը մարդն է՝ իր պայքարով ու պատմական ճակատագրով (Ղանալանյան 1969, ԺԵ–ԺԶ): Նա առաջարկել է ավանդագրույցների տեսակների հետևյալ դասակարգումը՝ ելակետ ընդունելով ավանդագրույցների էությունը և դրանց նպատակային, ճանաչողական, վարքաբանական, դեպքերի ու դեմքերի վերաբերյալ հուշապատումային բնույթը.

Ստուգարանական
 Բացատրական
 Վարքարանական

Նա նաև հայկական ավանդությունների մեջ առանձնացնում է ծագումնաբանությանը և բովանդակությանը վերաբերող տարանջատումները.

Միջազգային և եկամուտ ավանդություններ

Բիրլիական ավանդություններ

Պարականոն ավանդություններ

Վկայարանական և սրբախոսական ավանդություններ (Ղանալանյան 1969, ՃԿԳ-ՃՁԹ):

Ժամանակի ընթացքում տարանջատվեց նաև պատմական ավանդությունը, իսկ բիրլիական, պարականոն և վկայարանական ավանդությունները խմբավորվեցին և ստացան կրոնական ավանդություններ եզրույթը:

ՇՄՈՄՊԻԿ-ում տպագրված Սյունիքից և Արցախից գրառված ավանդագրույցներն իրենց բնույթով և բովանդակությամբ բացատրական, կրոնական, վարքարանական և ստուգարանական են:

Բացատրական ավանդագրույցներ: Հայկական բանահյուսական մշակույթում իրենց ուրույն տեղն ունեն Սողոմոն Իմաստունին վերաբերող ավանդագրույցները՝ որպես բիրլիական դեմքի և իմաստուն արքայի (Սողոմոն Իմաստունի մասին տես Հայրապետյան 2016, 358–376): ՇՄՈՄՊԻԿ-ում Սողոմոն Իմաստունին վերաբերող երկու ավանդագրույց կա, որոնցում ցույց է տրված արքայի իմաստությունն ու մարդկային բարձր արժեքները. «Легенды о Соломоне Мудром» (ՇՄՈՄՊԻԿ 1892, вып.13, отд. II, 330–331, գրառել է Անդրկովկասի ուսուցչական սեմինարիայի սան Ա. Միրզոնը, Ելիզավետպոլի նահանգի Ջիվանշիրի գավառի Ենգիջե գյուղից), «О Соломоне Мудром» (ՇՄՈՄՊԻԿ 1892, вып.13, отд. II, 158, գրառել է Անդրկովկասի ուսուցչական սեմինարիայի սան Ա. Բաբայանը, Բաքվում): Այս ավանդագրույցներն իրենց զուգահեռներն ունեն Արամ Ղանալանյանի «Ավանդապատումում» (8 տարբերակ. Ղանալանյան 1969, N 794, 340–347), և «Սյունիքի բանահյուսությունը» բանահյուսական նյութերի ժողովածուում (1 տարբերակ. Հայրապետյան և այլք 2020, 137–139):

Շահ Աբասի արշավանքը և մեծ գաղթն իր անջնջելի հետքն է թողել հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ: ՇՄՈՄՊԻԿ-ում Շահին վերաբերող «Կ ՄՈՒ-ԸՈՌԻԿ» ավանդագրույցի երեք տարբերակներում նվաճողը ներկայացված է ոչ թե բացասական երանգներով, այլ ցույց է տրված նրա խիզախությունն ու իմաստությունը՝ որպես միապետ (ՇՄՈՄՊԻԿ 1896, вып.21, отд. II, 96–98, (գրառել է Անդրկովկասի ուսուցչական սեմինարիայի սան Ա. Բաբայանը, Բաքվում): Այս ավանդագրույցի չորս տարբերակները գետնելված են Ա. Ղանալանյանի «Ավանդապատում» գրքում (Ղանալանյան, 1969, N 760, 292–294):

Բանահյուսության մեջ իրենց կարևոր տեղն ու դերն ունեն **իմաստարանական գրույցները**, որոնք իրենց ստեղծող ժողովրդի բարոյական արժեքների ու աշխարհայացքի զգայուն ցուցիչներ են: «Царь-пастух» ավանդագրույցում

պատմվում է իմաստուն հովիվ-արքայի արդարադատության մասին, որի առաջ խոնարհվում է անգամ արքան և նրան զիջում իր գահը (СМОМПК 1896, вып. 21, отд. II, 96–98, գրառել է Ս. Տարաղյանցը Ելիզավետպոլի նահանգի Ջիվանշիրի գավառի Ուլուկարաբեկ գյուղում): Գահակալելուց առաջ իմաստուն հովիվը խնդրում է հանել իր աչքերը: Ավանդագրույցի վերջում հրաշքով վերականգնվում է արքայի տեսողությունը և հարցմանն ի պատասխան ասում է՝ այդպես է վարվել, որ կարողանա շարունակել արդարադատ լինել: Այս ավանդագրույցն իր մտփվով աղերսներ ունի Քրիստոսի և Արգար թագավորի մասին պատմող մի ավանդագրույցի հետ (Ղանալանյան 1969, N 801, Բ, 352):

«Три головы» ավանդագրույցն իր բովանդակությամբ խնդիր-հանելուկ է, որում ցույց են տրվում մարդկանց տեսակները, և որը լուծում է արքան. առաջին երկու կտափները իմաստուն խոսքն արհամարհող և բամբասող դատարկաբանների են պատկանել, իսկ երրորդը՝ իմաստուն, որը լսած բաները պահել է իր մտքում և լուռ գործել: Այդ պատճառով էլ արքան մեծ պատվով թաղել է երրորդ կտափը և գերեզմանի վրա արձան կանգնեցրել, իսկ մյուս երկու կտափները դեն նետել է տալիս՝ որպես թոչունների կերակուր (СМОМПК 1896, вып. 21, отд. II, 98–99, (գրառել է Անդրկովկասի ուսուցչական սեմինարիայի սան Ա. Բաբայանը, Բաքվում): Իր բովանդակությամբ հայ բանահյուսության մեջ եզակի նմուշ է:

Հայկական հավատալիքներում ու ավանդություններում իր անփոխարինելի տեղն ունի թոնիրը և նրան մատուցվող պատիվը՝ իբրև սրբազան տարածքի (թոնրի մասին ավանդությունները տե՛ս, Ղանալանյան 1969, N 252, 95: N 263, 98: N 289, 106: Հայրապետյան և այլք 2020, 121): «Чистая вера спасает от огня» ավանդագրույցում, ի տարբերություն մեզ հայտնի տարբերակների, թոնիրը ոչ թե ջրով է լցվում, այլ՝ կանաչում և ծաղկում է. թոնրում հաց թխող գեղեցկուհի կինը, Աստծո սիրույն անսաղավ աղքատի խնդրանքին, թողնում է, որ համբուրի իրեն: Դրան ի պատասխան՝ կնոջ ամուսինը, տեսնելով կատարվածը, զայրացած հրամայում է Աստծո համար նետվել վատվող թոնիրը: Կինը նետվում է թոնիրը, որը իսկույն պատվում է կանաչով և ծաղիկներով, որը սրբազան տարածքի ընկալման կարևոր բաղադրիչ է: Սա իր վերջաբանով ևս եզակի նմուշ է (СМОМПК 1900, вып. 28, отд. II, 22, գրառել է Ելիզավետպոլի արհեստագործական ուսումնարանի ուսուցիչ Պ. Տոնիկը):

Կրոնական ավանդություններ: Հայ ժողովրդական բանահյուսության մեջ իրենց ուրույն տեղն ունեն նաև կրոնական բնույթի ավանդությունները, որոնք վերաբերում են և՛ Քրիստոսին, և՛ Աստվածածնին, և՛ սրբերին ու սրբացված անձանց, և՛ առաքյալներին, և՛ աստվածաշնչային դեմքերին: Այս ավանդություններն իրենց արձագանքներն են գտել նաև Արցախի ու Սյունիքի բանահյուսության մեջ: Մատենաշարում հանդիպում ենք Քրիստոսի մասին պատմող երկու ավանդագրույցների (Քրիստոսի մասին պատմող ավանդագրույցներ տե՛ս նաև Ղանալանյան 1969, N 801, 351–357, 15 տարբերակ; Հայրապետյան և այլք 2020, 136–137, 4 տարբերակ): «Предание о Господе нашем Иисусе Христе» ավանդագրույցն իր բովանդակության վերջին դրվագով աղերսվում է Ավետարանում պատմվող Հայրոսի

աղջկա հարության պատմությանը՝ որպես նախաքան ունենալով երկու հերոսների ազահության ու պատժի պատճառը և երրորդ հերոսի սրտաբաց հյուրընկալությունը, որը մարդացյալ Քրիստոսի կողմից վարձատրվում է վերջինիս որդու հարությամբ (ՇՄՄՊԿ 1900, ԿՄՄ. 28, ՕՏԸ. II, 29–32, գրառել է Անդրկովկասի ուսուցչական սեմինարիայի սան Ա. Բաբայանը Անուշ Բաբայանից, Բաքվում):

«Подвиг искупления» ավանդազրույցը այլաբանորեն է ներկայացնում Քրիստոսի փրկագործական խորհուրդը, որը կատարվեց խաչի վրա, իր արյունով, հարությունը, համբարձումը և Աստծո աջ կողմում բազմելը. արքան կավե շաղախով քարերից կանգնեցնում է մի բարձր պուր, վրան՝ մատանի, որը կհասնի միայն նրան, ով կկարողանա այն վերցնել: Շատերն են փորձում, բայց ապարդյուն: Հայտնվում է մի աղքատ տղա, որը բարձրանալու փորձեր անելիս արյունոտվում է, բայց հաստատակամորեն հասնում է մատանուն, վերցնում և վայր իջնում: Արքան բարձրանում է գահից, ընդառաջ գնում տղային և նստեցնում իր կողքին: Վերջում մեկնաբանվում է. պուրը խաչն է, արքան՝ Հայր Աստվածը, իսկ մատանուն հասած տղան՝ Փրկիչ Քրիստոսը: Այս ավանդազրույցը կարևորվում է նաև նրանով, որ իր բովանդակությամբ միակն է և չունի տարբերակներ (ՇՄՄՊԿ, ԿՄՄ. 21, ՕՏԸ. II, 103–104 գրառել է Անդրկովկասի ուսուցչական սեմինարիայի սան Ա. Բաբայանը, Բաքվում):

Իրենց կրոնական բնույթով առանձնանում են «Положник» (ՇՄՄՊԿ 1896, ԿՄՄ. 21, ՕՏԸ. II, 99–102, (գրառել է Անդրկովկասի ուսուցչական սեմինարիայի սան Ա. Միրզոբեկովը)) և «Как головешка зазеленела» (ՇՄՄՊԿ 1900, ԿՄՄ. 28, ՕՏԸ. II, 22–24, (գրառել է Ելիզավետպոլի արհեստագործական ուսումնարանի ուսուցիչ Պ. Տոնիկերը)) ավանդազրույցները, որոնցում ցույց է տրված ապաշխարող և աներկբա հավատքով աղոթող մարդկանց հանդեպ Աստծո անսահման ողորմածությունը և ներումը: Այս երկու ավանդազրույցները եզակի նմուշներ են և տպագրված ժողովածուներում չունեն տարբերակներ:

Հրեա վաճառականի մասին պատմող թափառիկ պլոժեն հանդիպում է նաև հայ բանահյուսության մեջ: «Еврей и серебряк» (ՇՄՄՊԿ 1889, ԿՄՄ. 7, ՕՏԸ. II, 86–87 գրառել է Ելիզավետպոլի նահանգի Ջիվանշիրի գավառի Կասապետ գյուղի ուսումնարանի վերակացու Գ. Իգրայելովը, նույն գյուղի գյուղացի 68-ամյա Հարություն Տեր-Գրիգորից, Կասապետում) ավանդազրույցում հրեան, ծաղրելով քրիստոնյա արծաթագործին, ծովն է նետում արքայի կողմից արծաթագործին ուղարկված մատանին, որը պետք է վերադարձվեր մեկ օրից: Արծաթագործը, չգտնելով մատանին, իր մուրճով երեք անգամ հարվածում է և ասում. «Մեծ է Փրկչի զորությունը» և վերադառնում է տուն: Առավոտյան արծաթագործը ձուկ է գնում, որ վերջին անգամ ճաշի իր ընտանիքի հետ: Ձկան փորը բացելիս՝ տեսնում են արքայի մատանին, որը վերցնելով շտապում է արհեստանոց, որ ժամանակին հասցնի վերանորոգել այն: Զարմացած հրեան հարցնում է իսկությունը, և իմանալով՝ հավատում է Փրկչին և մկրտվում՝ դառնալով քրիստոնյա: Ավանդազրույցը եզակի է, և տարբերակներ չունի տպագրված ժողովածուներում:

«О проатие Аврааме» (ՇՄՄՊԿ 1892, ԿՄՄ. 13, ՕՏԸ. II, 156–158, գրառել է Անդրկովկասի ուսուցչական սեմինարիայի սան Ա. Բաբայանը, Բաքվում, Ղանալա-

նյան 1969, N 791, 338, 1 տարբերակ) ավանդագրույցում պատմվում է Աստծո հանդեպ աստվածաշնչյան Աբրահամ նահապետի հավատարմության և իր կին Սառայի հետ ամուսնության մասին. քրմերը որոշում են կուռքերին ջարդելու հանցանքի համար Աբրահամին մահապատժի ենթարկել՝ այրելով խարույկի վրա: Նրանց հրամանով ժողովուրդը վառելափայտ է ժողովում, որի վրա կանգնեցնում են Աբրահամին: Բոցավառվող փայտերի վրա կանգնած Աբրահամը աղոթում է իր աստծուն՝ ուշադրություն չդարձնելով իր շուրջը կատարվողին: Եվ տեղի է ունենում հրաշքը. բոլորն Աբրահամի կանգնած տեղում տեսնում են չքնաղ այգի, ուր բազմաթիվ թռչուններ են երգում, իսկ ինքն ուրախ շրջում է այգում և վայելում այդ գեղեցկությունը: Տեսնելով հրաշքը՝ Աբրահամին սիրահարված արքայադուստր Սառան, անտեսելով դիզված փայտերի ահագնացող կրակը՝ վազում է իր սիրելիի մոտ: Այրվող կրակի մեջ ճանապարհ է բացվում Սառայի համար և արքայադուստրն անարգել ու անվտանգ հասնում է Աբրահամին և հայտնում, որ պատրաստ է ամուսնանալ նրա հետ: Արքան թեև չի համաձայնվում հրաժարվել իր կուռքերից, սակայն Աբրահամին ազատում է մահապատժից: Սա ևս իր բովանդակությամբ հայ բանահյուսության մեջ եզակի նմուշ է:

«Чудовище и отшельник» (СМОМПК 1898, вып. 24, отд. II, 224–227 (գրառել է Անդրկովկասի ուսուցչական սեմինարիայի սան Բ. Եղիազարովը, Ելիզավետպոլի նահանգի Ելիզավետպոլ գավառի Կարաչինսար գյուղից, Արցախի Շահումյանի շրջան) ավանդագրույցը առավելապես Արցախում և Սյունիքում հայտնի քրիստոնեական սրբերից Պանտալեոն բժշկի (ժողովուրդը կոչում է նաև Պանդ) մասին պատմող ուշագրավ ու գեղեցիկ նմուշ է, որի մի տարբերակը գտնում ենք Երվանդ Լալայանի Գանձակից գրառած նյութերի մեջ (Լալայան 1988, 438–439, 1 տարբերակ), Պանտալեոն բժշկի և նրա անունով ուխտատեղիի մասին տես նաև, Կաղանկատվացի 1969, 42–47; Հայրապետյան և այլք 2020, 149, սկզբնաղբյուր՝ Լալայեան 1898, Գիրք Դ, N 2, 49): Ավանդագրույցը պատմում է լեռան բարձունքում մի խիզախ քրիստոնյա երիտասարդի մասին, որը սպանում է շրջակայքի բնակչությանը մշտական սարսափի մեջ պահող հրեշին: Որոշ ժամանակ անց բնակիչները անտառում վառվող կրակ են տեսնում: Մոտենալով կրակին՝ տեսնում են, որ կացարանի տանիքն այրվում է անկեղ բոցով, իսկ երիտասարդն անշունչ պառկած է: Նրան թաղում են իր քրոջ գերեզմանի հարևանությամբ: Ժամանակներ անց երիտասարդի գերեզմանի վրա կառուցում են քարակոփ մատուռ և կոչում «Պանդ»: Ավանդությունը պատմում է, որ հեթանոսները փորձում են թալանել եկեղեցին, բայց Սկիհից ու խաչից բացի ոչինչ չեն գտնում: Երբ ուզում են հեռանալ, զգում են, որ իրենց ոտքերը թուլացել են, և զրկվել են խոսելու կարողությունից: Նրանք սկսում են հավատալ Միակ Աստծուն, ներողություն են խնդրում, դառնում քրիստոնյա: Նրանց աղոթքով Արարիչը նրանց է վերադարձնում խոսելու և քայլելու կարողությունը, իսկ եկեղեցին դառնում է մեծ ուխտատեղի (Պանդի ուխտի մասին տես Շագոյան և այլք 2018, 116–125):

Վարքաբանական ավանդություններ: Ավանդությունների այս տեսակը պատմում է պատմական և հայտնի դեմքերի հետ կապված պատմություններ իրենց կյանքից և անցած ուղուց: Մատենաշարում հանդիպող վարքաբանական

ավանդությունները վերաբերում են Պետրոս Մեծ ցարին (2 տարբերակ) և Թամերլանին:

«О Петре Великом» (СММПК 1892, вып. 13, отд. II, 159–161, գրառել է Անդրկովկասի ուսուցչական սեմինարիայի սան Ա. Բաբայանը, Բաքվում, 2 տարբերակ) Պետրոս Մեծին վերաբերող այս ավանդագրույցն իր երկու տարբերակներով հայ բանահյուսության մեջ նույնպես եզակի է, որովհետև լույս տեսած ժողովածուներում որևէ տարբերակ չունի: Ավանդագրույցի մի տարբերակում պատմվում է Պետրոս Մեծի և Սուլթան Ահմեդ խանի մասին, թե ինչպես է ցարը հաշտեցրել թշնամիներին և հոր գահին վերահաստատել Սուլթան Ահմեդ խանին: Երկրորդում պատմվում է Պետրոս Մեծի և պարսից Նադիր շահի հարաբերությունների մասին, և թե ինչպես է Նադիրը Կովկասը զիջում ցարական Ռուսաստանին և ցարին մեծամեծ նվերներով ճանապարհում իր երկիրը:

«Тамерлан»-ը (по рассказам джеваншерских армян) (СММПК 1889, вып. 7, отд. II, 64–68, գրառել է Շուշիի շրջանի Տուգ (Տող) գյուղի ծխական դպրոցի վերակացու Մ. Պողոսովը) ամենայն հավանականությամբ Լենկ Թեմուրի մասին պատմող ուշագրավ տարբերակ է, որը հետաքրքիր այլափոխումներով պատմվել է Զիվանշիրի գավառի հայերի մեջ: Այն պատմում է քահանա հոր կողմից խեղված և անհիծված երիտասարդ Էմիրի մասին, որն իր հայրենի Բալուջա գյուղից փախչելով՝ դառնում է մուսուլման, փոխում անունը և, որպես Թամերլան անունով արյունարբու նվաճող, վերադառնում հայրենի եզերք: Նա նվաճում է ողջ Փոքր Ասիան՝ իր ճանապարհին կոտորել տալով բոլոր քրիստոնյաներին: Հասնելով Սյունիք՝ նա խաբեությամբ հավաքում է հոգևորականներին ու բոլորին սպանել տալիս, սակայն հոր գերեզմանն անգամ գտնել չի կարողանում: Կոտորածներից կենդանի է մնում Վարդան անունով մի երիտասարդ որսորդ, որը սպանում է սպանդն իրականացնող դահճին: Թամերլանը Վարդանին, խիզախության համար, կյանք է շնորհում և նվիրում մի գյուղ, որը նրա անունով կոչվում է Վարդանաշեն կամ Վարդանի գյուղ: Ավանդագրույցում հանդիպում են նաև ստուգաբանություններ տեղանվան ու անվան մասին: Այս ավանդագրույցը ևս իր բովանդակությամբ եզակի նմուշ է:

Ստուգաբանական ավանդություններ: «Гошун-даш» (СММПК 1892, вып. 13, отд. I, 126–127, գրառել է Կապանի շրջանի Արծեվանիկ գյուղի ուսումնարանի վերակացու Ե. Մելիք-Շահնազարովը) վերնագիրը կրող հոդվածը հնագիտական ակնարկ է, որի մեջ տարածքի նկարագրությունից գատ պատմվում է նաև Ղոշուն-դաշի ավանդությունը՝ որպես ստուգաբանություն: Ակնարկի հեղինակը Կապանի շրջանի Արծեվանիկ գյուղի ուսումնարանի վերակացու Ե. Մելիք-Շահնազարովն է: Այս ավանդությունն իր գուգահեռներն ունի Ա. Ղանալանյանի «Ավանդապատումում» Սիսիանից (N 705, 263) և Շիրակից (N 724, 270) գրաված տարբերակների հետ, որոնք իրենց բովանդակությամբ նույնական են. քարակույտների տակ թաղված են զորավարներ, իսկ ուղղահայաց քարերի տակ՝ զինվորներ, որի պատճառով էլ քարերը կոչվում են «Զորքի քար» (Ղոշուն-դաշ):

Ամփոփելով նկատենք, որ հայ բանահյուսությունը անհատնում գանձարան է՝ հետաքրքիր իր բազմատեսակությամբ, ուր արտացոլված են հայ ժողովրդի աշ-

խարհայացքը, հավատալիքներն ու պատկերացումները աշխարհի, տիեզերքի, շրջապատող աշխարհի ու մարդու նկատմամբ:

Թիֆլիսում 1881–1915 թթ. հրատարակված ՏՄՈՄՔ մատենաշարում պահպանված հայկական ավանդաբանության եզակի նմուշներն իրենց բովանդակային ամբողջությամբ և մանրամասներով ուղագրավ են և յուրօրինակ սկզբնաղբյուր՝ Սյունիքի և Արցախի հավատալիքային համակարգի ու պատկերացումների հետազոտության համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂՔՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԿԶԲՆԱՂՔՅՈՒՐՆԵՐ

ՏՄՈՄՔ 1889–ՏՄՈՄՔ, вып. 7, отд. II, Тифлис, 1889.

ՏՄՈՄՔ 1892–ՏՄՈՄՔ, вып. 13, отд. II, Тифлис, 1892.

ՏՄՈՄՔ 1896–ՏՄՈՄՔ, вып. 21, отд. II, Тифлис, 1896.

ՏՄՈՄՔ 1898–ՏՄՈՄՔ, вып. 24, отд. II, Тифлис, 1898.

ՏՄՈՄՔ 1900–ՏՄՈՄՔ, вып. 28, отд. II, Тифлис, 1900.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԱԼԱՅԵԱՆ 1898–Լալայեան Ե., «Ազգագրական հանդես», Գիրք Դ, Թիֆլիս, 1898, էջ 26–50:

ԼԱԼԱՅԱՆ 1988–Լալայան Ե., Երկեր, Հ. 2, Երևան, 1988:

ԿԱՂԱՆԿԱՏՎԱՅԻ 1969–Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի (թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վարազ Առաքելյանի), Երևան, 1969:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 2016–Հայրապետյան Թ., Արքեպիսկոպոսի հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Երևան, 2016:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 2020–Հայրապետյան Թ., Մելիքյան Գ., Առաքելյան Ս., Կիրակոսյան Ա., Սյունիքի բանահյուսությունը, Երևան, 2020:

ՂԱՆԱԼԱՆՅԱՆ 1969–Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969:

ՇԱԳՈՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 2018–Շագոյան Գ., Հակոբյան Ա., Խուրշուդյան Վ., «Պանդի ուխտը»՝ որպես գետաշենցիների ինքնության հարացույց, Հայ ժողովրդական մշակույթ XVII, Երևան, էջ 116–125:

Siranuysh Arakelyan

Institute of Archaeology and Ethnography NAS RA

nrane3@yahoo.com

TRADITIONS OF ARTSAKH AND SYUNIK ON THE PAGES OF THE RUSSIAN-LANGUAGE BOOK SERIES "COLLECTION OF MATERIALS FOR THE DESCRIPTION OF LOCALITIES AND TRIBES OF THE CAUCASUS" (SMOMPК 1881–1915)

Keywords: Armenian folklore, Artsakh, Syunik, a behavioral tradition, religious tradition, semantic conversation, explanatory tradition.

From the second half of the 19th century to the first decade of the 20th century, in the context of its cultural policy for the "spiritual rapprochement" of the peoples living in the

Caucasus and the eastern part of the Armenian highlands under its rule, Tsarist Russia undertook the publication of the Russian-language cultural series SMOMPК, which was printed in Tiflis. The bibliography mainly includes materials relating to various genres of folklore of different peoples: Armenians, Georgians, Tat people and others, archaeological and ethnographic reviews.

In 10 of the 46 volumes of the series, Armenian folklore materials and archaeological and ethnographic reviews were published. Most folklore materials were recorded in the Artsakh-Sunik region, where foreign folklore collectors also made business trips. A large amount of folklore material consists of Armenian folk tales and traditional legends, which have never been studied or republished.

The purpose of the study is to rescue from oblivion and introduce into scientific circulation traditional talks and conversations that are part of the intangible cultural heritage of Artsakh and Syunik, translated and published in SMOMPК-in Russian, some of which have parallels in their content and types in collections we already know, and some are unique to Armenian folklore.

Сирануйш Аракелян

Институт археологии и этнографии НАН РА
nrane3@yahoo.com

ПРЕДАНИЯ АРЦАХА И СЮНИКА НА СТРАНИЦАХ
РУССКОЯЗЫЧНОЙ КНИЖНОЙ СЕРИИ "СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ
ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН КАВКАЗА" (СМОМПК 1881 – 1915)

Ключевые слова: Армянский фольклор, Арцах, Сюник, поведенческая традиция, религиозная традиция, семантическая беседа, пояснительное сказание.

Со второй половины 19-го века до первого десятилетия 20-го века, в контексте культурной политики по "духовному сближению" народов, населяющих Кавказ и восточную часть Армянского нагорья, находящихся под ее властью, царская Россия предприняла издание русскоязычной культурной серии СМОМПК, которая печаталась в Тифлисе. Библиография в основном включает материалы, относящиеся к различным жанрам фольклора разных народов: армян, грузин, татов и других, археологические и этнографические обзоры.

В 10-ти из 46-ти томов серии опубликованы материалы армянского фольклора, археологические и этнографические обзоры. Большинство фольклорных материалов было записано в Арцахско-Сюникском регионе, куда также совершали деловые поездки иностранные собиратели фольклора. Большое количество фольклорных материалов составляют армянские народные сказки и традиционные сказания, которые никогда не изучались и не переиздавались.

Цель исследования-спасти от забвения и ввести в научный оборот традиционные беседы и беседы, являющиеся частью нематериального культурного наследия Арцаха и Сюника, переведенные и изданные в СМОМПК-на русском языке, некоторые из которых имеют параллели по своему содержанию и типы в уже известных нам сборниках, а некоторые являются уникальными для армянского фольклора.